

## ՊԱՏՄԱԿԱՆ

### ՀԵՇԻՕՆԵՑ ՏԵՂԾՔՐՈՒԹԻՒՆ ՀԵԴՐԵՑ

( Հ - Բ - Հ - Հ - Ե - Ե - Ա - Բ - Բ - Ա - )

### ՅՈՒՊԻՑԸ Պ.

### ԺԱՄԱՏՈՒՆ ՄԵԾԻ ՏԱՃԱՐԵՆ.

Առ զրան մեծի տաճարին է հրաշակերտ ժամատուն, որ այժմ համարի գաւիթ նորա: Արտաքին երեսոյթ ժամատանն գեղեցիկ է յոյժ: պսակեալ փոքրիկ կտթուղիկէիւ, ուր կախեալ կային երբեմն փոքրիկ զանգակք: Այս ճարտարաշէն ժամատուն կառուցեալ է ի վերայ երկուց մեծամեծ միակուր սեանց, որոց բարձրութիւնն է երկու կանգուն և կէս: Որպէս ի ստորեւ, նոյնպէս և ի գլուխ երկուց սեանց եղեալ կան մէն մի գեղեցկաքանդակ խոյակք, յորոց վերայ բարձրանան աղեղնածե հոյակոտ քառակուսի կոմարքն այնպիսի իմն ճարտարաշնար արուեստիւ, մինչեւ յասուշ կրթել զտեսողս: Քանզի կամարք ի վերայ կամարաց գործեալ, կարմիր քար ընդ կապոյտ քարի օղընդօղ շղթայօրէն աղխաղեալ բերեն զնմանութիւն ամպոց, կուտակելոց մի զմիով յելս անդ արշալուսոյ զկնի մտախլապատ մթութեան, երբ տակաւ առ տակաւ տեղի տան նորա ի նշուլից արեգակսն: և այնպէս քաղելով գործեալ բազմաթիւ մանունց կամարացն կացուցանեն զհրաշալի բարձրագագաթ զայն շինուած:

Երկայնութիւն մեծի ժամատանն է քսան և ութն կանգուն, լոյնութիւնն քառասուն և երկու, իսկ ձեն խաչանման: Յաջմէ և յահեկէ են երկու խորանք կրկնայարկք տեղիք սրբազնագործութեանց: Ի ձախակողմն առաջի զասուն է այլ խորան կառուցեալ ի Ու.Դ թուին ( 1185 ) ի Գաւթայ որդւոյ Վասակայ ի վերայ շիրմի հօր խրոյ և քեռն Փուրթուխանայ, որոց գերեզմանք գըտանին առ զրան խորանիս: Ի կեղրոնի այսր ժամատան գոյ վիմափոր աւազան կերտեալ ի մեծ միակուր քարէ, յորում ի տօնի Աստուածայայանութեան կատարեն զջրօրչնէքն: Յաջակող-

մեան գասաւն յարեւելս կոյս է առավանն, ուր մկրտին զերեխայս Կամարակապ սիւնազարդ զբունք ժամատանս են երեք ի հիւսիս ի հարաւ և յարեւմուտա. այժմ զբունք հիւսիսոյ և հարաւոյ փակեալ են որոնիք. ընդ կամարակապ և շքեղաշէն զուսն արեւմօից մտանեն ի ժամատանս և աստի ի տաճարն ուրբ:

Այս մեծաշէն ժամատան՝ յառաջն էր փոքրագոյն գաւիթ զոր կառոյց Մարիամ զուսար Կիւրիկէի \* ) արքայի ի վերայ հանգըստարանի հօր և մօր իւրոյ Թամարայ և քեռն իւրոյ Առւսուղնայ և իւր: Ի ստուգութիւն որոյ եղից աստանօր և զարձանազրութիւն նորա ի վերայ հիւսիսային կամորի փակեալ զրանց որոյ օրինակն է այս: « Ի թուին Հայոց Ա. Դ. (1185) Ես Մարիամ զուսար Կիւրիկէի արքայի՝ մեծ յուսով շինեցի զտունս աղաւթից ի վերայ հանգստարանի մեր հաւր, քուեր իմոյ Առւսուղնայ և մաւր իմոյ Թամարայ և ինձ Մարիամու. յառաջնորդութեան տեառն Բարսղի արհի եպիսկոպոսի. որ և աւարտեցաւ ի ձեռն սորին: Արդ՝ որք մունէք ընդ զրունս սորա և երկրպագէք սուրբ Նշանիս յիշեցէք յաղաւթո ձեր զմեզ և զնախնի թագաւորքո մեր, որք հոնգուցեալ են առ զրունս սրբոյ կաթուղիկէիս ի Յիսուս, Քրիստոս: »

Ի ԺԷ. գարուն Հաղբատ եղեւ եպիսկոպոսնիստ աթոռ ի ձեռն Կիւրիկէ արքային. և Յովհաննէս եպիսկոպոս Խաչենեցի: Հրամանաւ երկուց հարազատացն Զաքարէի և Կիանէի կոչեցաւ յիպիսկոպոսութիւն սուրբ աթոռոյս Հաղբատայ յամա աստուածաւը թագաւորացն Թամարայ և որդւոյ իւրոյ Գէորգեայ ըստ պատմելոյ Կիւրակոսի: զգաւիթն փոքրագոյն քակեաց որ ի գուան կաթուղիկէին Հաղբատայ և շինեաց մեծ և գեղեցիկ շինուածո՝ որ զարմացուցանէ զտեսողս հիացմամբ: ըստ բանից Կիրակոսի վասն սոյն տէր Յովհաննիսի: որ արար զբազում գործս արժանի յիշատակաց, գրի և յարձանագիրս մեծի ժամատան իներք քուստ ի վերայ արեւելեան որմոյն այսպէս: Ես տէր Յովհաննէս

(\*) Թագաւորն Կիւրիկէ և նախնիք նորա տիրեալ աշխարհին Աղուանից կոչեցան Աղուանեան կամ Կիւրիկեան թագաւորք. տիրելով երկրին՝ սկսեալ ի Սոմիսէթայ մինչև ցծովն Կասովից. այսինքն այժմեան թաթարաբնակ գաւառացն: Կիւրիկէ հայր Մարիամու էր երրորդն ի կարգս յայտ անուն կոչեցեալ արքայից. և թագաւորեաց ի վերջ ՃՐ գարուն:

ի Խաչենոյ ներողութեամբն Աստուծոյ կացեալ եմ ամս բաղում յառաջնորդութեանս և ըստ իմաւմ կարողութեանս սպասառութեցի սրբոցս ի շինութիւն և յառաջագիմութիւն տանս Աստուծոյ, նաև ի ձեռն շինուածոց ի Սուրբ Նշանիս . . . զկաթուղիկէս սաւել, և զգուռոս կազմել, զսուրբ Քրիզորն նորոգել, զգաւիթս շինել զգաւթի սուրբ սեղանոյն և զերեք Սուրբ Նշանս:

Իսմին ժամաստան են տապանք թագաւորոց, թագուհեաց, իշխանաց և իշխանազանց, որոց առանց թաւոց տապանագիրք տակաւին կան անջինջ. որք են:

### Ի Կողմն Հիւրիսոյ:

1) Արաս թագաւոր: Սա էք տիրոզ իշխան Ածնարերդի յազգէն Բագրատունեաց, որդի վերջին կիւրիկէ արքայի, որդւոյ Դաւթի Անհողինի, որդւոյ Կուրգէնայ, որդւոյ թագաւորին Աշոայ Աղորմածի:

2) Կիւրիկէ թագաւոր: Թագաղարմ որդի Դաւթի Անհողինի:

3) Քոյր սորա Առուսուդան:

4) Թամար թագուհի կին Կիւրիկէի:

5) Մարիամ, Առուսուդան և Բաւրինայ՝ գստերք Կիւրիկէի:

6) Դաւիթ: Թերեւո հարազատ եղբայր Արասայ թագաղնի:

Ի Կողմն հարաւոյ առաջի երկուց գեղեցկաքանդակ խաչաքարոցն ևս գրի:

1.) Արաս թագաւոր:

2.) Կիւրիկէ թագաւոր:

### Ի Կեզրոնի ժամաստանս:

3.) Քրիզոր Ամիրայ (Երեւելի իշխանք Հայոց:

4.) Քուրդ Ամիրայ (Երեւելի իշխանք Հայոց:

5.) Այս է հանգիստ Աթոքէգ Ագունին:

6.) Վասակ, 7.) Փուրդուխան, 8.) Համզա, 9.) Թայիկ, 10.) Կաւթել, 11.) Նուսթի, 12.) Դոլ, 13.) Դաւիթ:

14.) Խոսարովիկ, 15.) Խոռաս-Հասան, 16.) Առուսուդան և 17.) Աասնայ:

Արքա ամենեքեան են սերունդք ի տանէ թագաւորական տոհմին Բագրատունեաց:

Ի սոյն ժամաստան աստ և անգ եղեալ տապանագիրքն հաւասար յատակին առանց թուոց:

1.) Տէր Քրիզորիս, 2.) Տէր Քրիզորիսի եղբայրն է, 3.) Փիլիպպոս արքեպիսկոպոս Առնջեցի, 4.) Ամբատ օրդի Աքանայ.

5.) Այս է հանգիստ Մամետնին, 6.) Նամայ. \*) 7.) Արլ - Հասան  
8.) Ծիթվասան, 9.) Այս է հանգիստ Մինաս վարդապետնի,  
10.) Ամբատ որդի Գարբանիէլի, 11.) Զաքարէի և  
Խվանէի քուեր որդին Յոհաննէս եպիսկոպոս տեղւոյս, շինողն  
Կոյան բիրդի: 12.) Մայր Յափչաննէս եպիսկոպոսի և քոյր Զա-  
քարիայի և Խվանէի Նեգուփ: 13.) Ահագայ և 14.) Սենեքերիմ  
թոռն աւագ Սենեքերիմոյ, եղբարք Խաթունին տիկնոջ Հասանայ  
յազգէն Դէսումեանց: Խոկ աւագ Սենեքերիմն էր վերջին արքոյն  
Սիւնեաց վախճանեալ իր 1104 ամի:

Են ի սմին ժամատան կցեալ շար իշար կարգաւ գերեզմանա-  
քարք անդիբը և զրաեղձք, զորս անհնարին եղեւ ինձ ընթեռ-  
նուլ ուստի գիցուք աստ կարգաւ զարձանագրութիւնս ի վերայ  
որմոց և սեանց մեծի ժամատանս իներքուստ:

## Ա.

Ի ճակատ որմոյն մեծի տաճարին արտաքոյ արևմտեան դրան  
որ ի ժամատանէն դէպ յարեւելու կայ զրեալ այսպէս:

« Ի ժամանակս ինքնակալ արքային Գաւթի Անհողինի Գուրգէ-  
նայ որդւոյ Բագրատունոյ թագաւորին՝ ես Ծիթվասան որդի Ա-  
րաւայ արքային և ամուսինն իմ Ռուսուդան զնեցի իմ հալալ ըն-  
չիւքի Ուքանի որդեացէն՝ Անագէթն, Մամիսուտն, Բագէնքն,  
Տերդկայ ոյզին՝ որ ջրանցի արխի տակն է, և ձորթոլանց տունն և  
Աւէտն իւրեանց հայրենիքն գանձագին արարի և ետու իմ Սուրբ  
Աշտմի՝ ընծայ, և այլ արդիւնք առաջնորդ Հայր Սիմէաւն և  
միաբանքս սահմանեցին տարին երեք քառասունք կատարեն ան-  
խափան: Այ խափանէ, կամ հանել հնարի յիմոց կամ յաւտա-  
րաց մասն Յուզայի և Կոյենի առցէ, իմ մեղացս և իմ ազգի  
մեղացն տէր է, և մի առոցէ զիսաւս Որդւոյն Աստուծոյ, խոկ կա-  
տարիչքն աւրհնին ի Տեսոնէ՝ Ամէն, Թիւն Նեե. (996):

Յարեւելեան կողմն ի վերայ որմոյն ժամատան գրի այսպէս:

« Յամն աստուածառը Խագուորացս Թամարայ և որդւոյ իւ-

(\*) Աս էր ամուսին յիշեալ Արաս թագաւորի, և դուստր մեծին Սարդսի  
սպասալարի Հայոց և Արագ, որ յետ մահուան առն իւրոյ ի ծաղկեալ հա-  
սակի ի յիշատակ նորա շինեաց ի սրբատաշ քարանց լայնարձակ կամուրջ ի  
վերայ գետոյն Սեաւորդեաց ձորոյ, այժմլան Վերեգայ գետոյն:

րոյ Գէօրգի և երկու հարտզատաց Զաքարէի և Եվանէի հրամանաւ սոցա կոչեցայ յետիսկապսութիւն սուրբ տիտղոսը Հաղբատաց. Ես Յովհաննէս ի Խոյշենոյ ներազութեամբ Աստուծոյ կացեալ իմ ամս բազում յառաջնորդութեանս և բատ իմում կարպութեանս սովասաւորեցի սրբոցս իշխութիւն և յառաջադիմութիւն տանս Աստուծոյ նախ ի ձեռն շինուածոց ի Սուրբ Նշանիս ի մատեանս ի սպաս զարգուց. զկաթուզիկէս սալել, և զդուռս կազմել, զսուրբ Գրիգորն նորոգել, զգութիմու շինել, զգաթի սուրբ սեղանայն և զերեք (սուրբ) Նշանս. Եւ իմ ինդիր է միուբանիցո զսուրբ Յակոբայ տաւնի կիրակէն իմ սուրբ Նշանացս տաւն կատարեն, և զսուրբ պատարագ յաւորն ինձ մատուցանեն ամեն եկեղեցիքս. և մի ոք իշխեացէ այլում տալ յայոմ տուր զժումն. և որք կատարեն զալաշանս մեր աւրհնեսցին ի Տեառնէ Աստուծոյ, Ամէն: Թիւն ՈՀ (1221):

«Յանունն Աստուծոյ ես Պուլտուճ եղբայր տէր Յովհաննիսի ետու ձև. զահեկան ի շինութիւն ժամատան, և ինձ պարտին ի տարումն հինգ պատարագ. ով խափանէ իմ մեղացս և իմ աղջի մեղայն պարտական է առաջի Աստուծոյ»:

Ի վերայ սեանն աւազանին ի ժամատան զրի այսպէս.

«Կամուն Աստուծոյ ես Ասանոյ որդի Ամլանափին և ամուսինն իմ Ռուսուզան յառաջնորդութեան տէր Համազասպայ Յերդկայ Տիկնաբարայ մեծ այգին իւր Հնձանովն գանձագին արարեալ ետու Հաղբատաց սուրբ Նշանիս վախոն. որչափ մեք կենդանի եմք մեր ծնողացն առնեն և յետ մեք հոգւոյն երկու քառասունք մեզ առնեն. ով խափանէ մեր մեղայն տէր է առաջի Աստուծոյ. կատարիչքն աւրհնին. Ամէն: Թիւն ՈՊ.Ա., (1242):

Ի խաչոքարին կանգնեցելոյ ի վերայ աւազանին քառակուսի զրեալ կայ այսպէս:

«Ի թիւս ՆԾԵ. (1006) ի թագուորութեան Դութի ինքնակալի և ի Հայրութեան Յովհանէոյ ես Մեօրոպ կանգնեցի զսուրբ Նշանս յալխտի Հաղբատաց» :

Ի հիսուսակողմն ի վերայ Հոյտէաոդ կամորի մեծի ժամատանս զրի այսպէս:

«Ի թուին ՈՊ.Բ. (1249) Կամուն Աստուծոյ Ես Գրիգոր եղբար Տեաւն Համազասպայ առաջնորդի սուրբ ոխոփու Հաղլ առայ մեծ յաւսով ապաւինեցայ ի սուրբ Նշանս և զիմ Հոգեթագին գեղն՝

որ գառնձուի գնեալ էի ի Թաղիազինի որդեացն ի Ասրգուն զԱկուա-  
ւաձորն՝ որ կոչի Մամիսուտ \* ) ետու ի սուրբ Նշանս յաղագս փրր-  
կութեան հոգւոյ իմոյ աեղեակցութեամք վարդապետացս և ամէն  
եղբայրութեանցս ընկալան միաբանութիւնս և սահմանեցին զա-  
մէն եկեղեցիքս յիմ անուն պատարագել զՔրիստոս ի նոր կիւրա-  
կէի երկու պատարագ Մամքանայ իմ կենակցին և այլն ինձ և  
զսեղանն յիմ անուն գնեն որպէս զՆանային։ Արդ՝ եթէ ոք զուրն  
և զժամն խափանէ ի յարքայական սեղանոյն Քրիստոսի զրկեալ  
եղիցի և իմ մեղացս պարտական է առաջի Աստուծոյ։

Յարեւելեան կազմն ի վերայ հին խաչոքարին զրի։

\* ՆԾԴ թուին (1004) ի Հայրութեան Արմէսնի՛ և Ատում վերա-  
կացու եկեղեցւոյս կանգնեցի զիաչս ինձ ազաւթս արարէք։

Ի վերայ սեմոց ձախակումեան խորանին առաջի զասուն։

\* Ի թուին ՈՒԾ (1189) Յաւաջնորդութեան Տետուն Յարողի  
հաւրեղբար ևս Դաւիթ որդի Արանին շինեցի զիարանս և զեկե-  
զեցիս ի վերայ հանգստարանի հաւը իմոյ և քուեր Փուրբթուխանին։  
Արդ՝ ազաչեմ սուրբ Եղբայրութիւնս զազուհացից շարաթ արն  
և զեկիւրանին իմ մատրն Վանելի զստեր Կիրիկէի թոգաւորին և  
իմ ցուերն Փուրբթուխանայ երկու քառասունք և իմ հաւըն Ա-  
րանին և յետ ինձ և իմ քուերն և մատրն ով խափանէ մեր  
խողնիս պարտական է առաջի Աստուծոյ։

Ի մէջ մեծի գաւթին ի ձախակոզմն առաջի զասուն ի վերայ  
երկուց քարտոց փորագրեալ է այս օրինակ։

\* Կամաւ ամենակալին Աստուծոյ ի թիւս Հայոց ՈՒԹ (1220)  
այս է մեր զիը Հաղբատայ եպիսկոպոսիս Յովհաննիսի և ամենայն  
միաբանոցս մեծի և փոքրու որ տուաք Վաշէի որդւոյ Աարգունին  
թուին Վաշուտին \*\* ) և իւր կենակցին Մամախաթունին միաբա-  
նութիւն։ յայս տասն ամս որ եկին ի սուրբ Նշանս և յամենայն  
բնշից իւրեանց արդիւնաւորեցին մեզ և մեր ընկալաք սիրով և

(\*) Այս զիւղն զտանի առ զետովն Շուշափերի ի Սոմիսէթ (տես աշ-  
խարհագր. Արաց երես 464) նոյնպէս աստ է զիւղն Ազուաւածոր փոքր ինչ  
հետի ի Մամիսուտոյ յարեւուտս նահանգին Տաշրաց։

(\*\*) Այս Ասչուտ էր ազգապետ տոհմին Վաշուտեանց որք էին տեղա-  
պահ՝ կուսակալք Մխարգրձելեանց երկայնարագկաց ի հարաւային կողմանա  
տիրապետեալ երկրի նոցա։

կարգեցաք զխայգիւտին շաբաթն և զկիւ բակէննոցա առնեն ժամ՝ յամենայն եկեղեցիքս անխափան մինչի կատարած աշխարհից, ուշափ կենդանի են՝ Վաշէի ծնողացն առնեն՝ Սարգսի և կատային և յետ նոցա մէկ աւրն Վաշէի և մէկ տւրն Մամախաթունին. և որ զայս խափանէ մտսն Կայենի և Յու դայի առցէ, և նոցա մեղացն տէր է առաջի Աստուծոյ: Ես Մամախաթուն տիի զձիթահմանքն որ ի Վահրամայ որդեացն գնեցի զմին ակն, որ երբ ժամն մերն լինիւ զսեղանն ի մեր անուն դնեն. ով խափանէ կամ յետ առնու զձիթահմանքն ի փանից զվերօգրեալ նզում առցէ: »

Ի մէջ մեծի գաւթին ի կողմն հիւսիսոյ յարեւլս կոյս ի գույն երից քերտքափանդակ զարմանագործ խոշիցն ի վերայ կամարակոս քարանցն գրի այսպէս:

« Ենորհիւն Աստուծոյ ես Մարիամ գուստը Կիւրիկէի արքային Հանդերձ Առւսուղնայիւ շինեցի զգաւիթս և ծածկեցի իմ արդեամբս. տիի այգի. Հատի զնորաւթիւն . . . . Ծառզարդարին մ զ պատարագ լիցի . . . . : Կէս շքեղաշէն կամարն լի է արձանագրութեամիք, բայց խորառ եղծեալք և անշերծանելիք այժմ: Ի ներքոյ կամարիս են կարգաւ գերեզմանք թագաւորաց և թագուհեաց Կիւրիկեան Բագրատունեաց: »

Ի վերայ պատուանդանի խաչին աւաղոնի՝ որ յաջակողմն զրան մեծի եկեղեցւոյն արձանագրութիւն:

« Կամաւն Ամենակալին Աստուծոյ ես տէր Յովհաննէս առաջնորդ սուրբ ուխտիս Հաղբատայ լրմամբ եւրացս ընկալաք սիրով զտէր Դրիգոր եպիսկոպոս Տարսոնոյ, որ եկն յերկրագագութիւն սուրբ Խշանիս, և ետ ընծայ եկեղեցւոյս սպիտակ զիստոյ նափորո ի փոյելումն եղբարցս. և խնդրեաց ի մէնջ միաբան և եղբայր լինել մեզ. և մեք ըստ յօժար կամաց նորա սահմանեցաք զսուրբ Աստուծածածնայ աւրն զվերափխաման երրորդ աւուրն զպատարագն: որ զամէն եկեղեցիքս իւր ծնողացն առնեն՝ Թորոսի և Դագերի և մնուցողացն Տէր Բարոզին ի Հոփիսիմեանց աւանին, և յետ վախճանի նորա, իււն լիցի. կատարիչքն աւրհնին ի Տեառնէ: »

Բ.

Արձանագրութիւնք ի վերայ որմոց մեծի ժամատանն արտաքուստ:

Ի ճակատ արեւմտեան զրան մեծի ժամատան փորագրեալ կայ

այս արձանագրութիւն և ապա ներկեալ կարմիր գեղով:

«Կամաք և սպարմալմեամբն Աստուծոյ Հաւր հզարի և միտծնի բանին և ամենասուրբ Հոգւոյն այս գիր արձանագրեցաւ կտակ մշտնջենաւոր յամն աւծելոյ Աստուծոյ թագաւորաց թագաւորին Գէօրգէ որդւոյ մեծ թագաւորին Թամարին, յորոյ ժամանակս ետ Աստուծոյ ի ձեռս երկու հարազատացս Զոքարէի և Եփանէի զսեպհական դղեակն մեր գրեթ, զշինեալն ի նախն և այ մերոց և զայլ բազում ամրոցս: Արդ ես Մահղատուրթախաւցէս \* ) Ամիր սպասալար Նահնշահ Զաքարիա որդի բարեպաշտի իշխանաց իշխանին Արգոսի ետու ի սուրբ ուխտ Հաղբատաց զիմ հալրենի որ Աշոցք \*\* ) զՀաղպաշտի և զվ . . . և զի այս գեղերս հեռի էին ի Հաղբատաց փոխեցի և ետու հայրենիք Դաւթի որդւոյ Նախորկայ և առի երկու գեղին փոխան զՀաղպատ հայրենիք և ընծայ սուրբ Նշանին Հաղպատաց ամենայն սահմանօք. ոնց ( որպէս ) բնական եղեալ է հողով և ջրով, խոտամարգերով, մայրիւք և ջաղացովք, գոմամնարգերով, լերամեր և գաշտով վասն երկար կենցանութեան թագաւորին և արեշատութեան որդւոյ իմայ Նահնշահի և եղբաւը իմոյ Խլանէի և որդւոյ իւրոյ Սւագին և յիշատակ մեղ և ծնողաց մերոց: Եւ է այս զիւղ աղատ յամենացն հարկէ ի պատրոնաց ի ձեռնաւ որաց ի գիւղականաց: Եւ եզի լուծ ի վերայ սոյտ զայս՝ որ ի մեծ եկեղեցին զաւագ խորանի սպասարագն ան-

(\*) Վրացերէն Ճաճրս թիոյ հօ - չ Շ շ ի լ ո ւ թ ա ր ո ւ թ ե ն շ ա ն ա կ է » աւագ նախարար առ զրան արքայի « ի պատմութեանց Վրաց երկե՛թէ Զաքարիա Մխարդը ձէլն (երկայնարազուկն) ստացաւ աստիճան զեներալ Խօհմանսի յետ մահուանն Գամբէկլեայ վասն քաջագործութեանց իւրոց ի ճակատամարտին ընդդէմ Սելջուկաց ի 1185 ըստ բանից Վախուշտայ. իսկ զայս նոր պաշտօնէ նորա ոչինչ զրի. բայց որովհետեւ Զաքարիա վաղ մեռաւ քան զթամար, ապա մարթէ ասել թէ ի 1210 թ. թագուհին զեռ կենդանի էր: Պատմութիւնը Հայոց և Վրաց վկայեն՝ թէ Զաքարիա էր սպասալար զօրաց Հայոց և Վրաց ի մեծ պատերազմն ի քաղաքին Հոռմզվար կամ ի Խորասան ի 25 ամի թագաւորութեան Թամարի յետ որոյ վախճանեցաւ: Համաձայն թուականիս մերոյ եթէ Թամար բաղմացաւ ի գահ իշխանութեան ի 1184 ապա Զաքարիա ի 1210 կարէր ևս յիշել վասն թագուհոյն:

(\*\*) Յիշաւի Աշոցք նահանգն Արարատեան գաւառի բաւականին հեռի էր ի Հաղպատաց ի հարաւոյ յարեմուտս. բայց տեղին Հալալաշէն գեղջարդ ևս չէ յայտնի:

Ետիւն յիմ՝ Զաքարիայի անուն մասուցանեն յայսմչեռէ. որ  
թիւ Հայոցս է 030. (1210) մինչ ի գոլուստն Քրիստոսի: Եթէ  
հակառակի որ և զմեր յիշատակս խափանել ջանայ՝ յիմոց կամ  
յաւսպաց մեծ կամ փոքր՝ վրաց կամ Հայոց ի Լաւուեաբունց՝  
յեպիսկոպոսաց, ի քահանայից կամ յաշխարհականաց արանց,  
կամ զշտղբատու յետ առնու, և զիմ պատարագն խափանէ նորու-  
թի յԱմենակալ բերանէն Աստուծոյ, և աւանդող հոգւոյ նորու  
սատանայ եղիցի:

Ե զեր քան զաեամս զրան յազենաձեւ կամարին զրի երկոռ-  
պիւք:

\* Կաման ամենակալին Աստուծոյ Հաւը և Որդւոյ և Հոգւոյն  
որբոյ ես Միերգրձէլ նահնշահ որդի Զաքարիայի և ամուսին իմ՝  
Նազովիդ գուստը Աթարէգ \*) Սամթունին մեք ըստ նախնեաց մե-  
րոց միաբանեցաք և տվաք յաւանդանոցն մուզագային 03. (1500)  
սպիտակ սուրբ Նշանիս մոմագին յամէն տարի, և եկեղեցւոյ նա-  
փորտանի և կանթեղք արծաթիք վասն արեշատութեան Խվանէի  
Հաւը բեղրաւը իմոյ և որդւոց մերոց և ծնողաց և մեզ: Եւ մեր  
ինդիրն այս է յեպիսկոպոսէն և ի միաբանիցու որ Վարդավառին  
շաբաթ աւրին նոցաւ և կիւրակէն ինձ ժամ առնեն յամէն եկե-  
ղեցիքս. կատարողքն աւրհնին յԱստուծոյ. և զիսափանողքն  
զառէ Քրիստոս Աստուծու:

Յաջ կոզմն զրան գէոլ ի հիսուս:

\* Կաման Աստուծոյ ես Սամթաւութուն Ամբատաց որդի Համա-  
զատարոց և ամուսինն իմ Խորիշահ մեծ յաւսով ապա ինեցոր  
սուրբ Նշանիս Հաւլբատույ և տուաք 55. գահեկան ընծայ սուրբ  
Նշանիս. Տէր Համազատով և միաբանքս ետուն մեզ զպատարուգ  
մեծ եկեղեցին ի տանի Խվարդի. որչով մեք կենգանի եմք Գ. Ար-  
տաւազայ և Ամբատաց և յետ մեր Գ. ինձ և Բ. իմ ամսւանոյն,  
ով խափանէ զատի յԱստուծոյ:

Կներքոյ սորա ի թուին ԶՃԶ. (1267)

\* Կաման Աստուծոյ ես Վարդան Տիփիսեցի և ամուսինն իմ՝  
Մինա մեծ յաւսով մ'արանեցաք եկեղեցւոյ և տուաք ընծայ  
սուրբ Նշանիս ըստ մերում կարեաց. և տէր Յովհաննէս կամակ-

(\*) Աթարէգ Սամթուն՝ աներն Շահնշահի ստացաւ զպատուանուն Աթա-  
րէգ Աթարէգ յարբայէն Արաց Դիմիտրոյ Բ. և վախճանեցաւ ի 1283 ամին:

ցութեամբ եղբարցս սահմանեցին մեզ պատարագ ի տաւնի Պետրոսի և Սրբազնութեան զամենայն եկեղեցիքս. մեր կենդանութեամբ մեք ծնողացն առնեն և յետ մեր ելիցն մեզ. կատարողքն աւրշնին ի Տեառնէ:

### Կից սորա:

\* Կամաւն Աստուծոյ ես մեզուցեալ Անդրխառ քահանայ կոսի ի դուռս կաթուզիկէիս և ետու ընծայ ոռ ուր Նամիս ըստ մերում իշորեաց. տէր Յովհաննէս և ոպտոսա որյ ո ընէլալան և ետուն մեզ պատարագ ի տաւնի Տիառսի առաքելացն:

Քահեակ կողմն մեծի զրան ի թուին 2Բ. (1253)

\* Կամաւն Աստուծոյ՝ ես Շնորհաւոր Տիփունցի որդի Եղիազարաց ամուսնաւ իմայլ Առւսուզանաւ և որդովք իմովք Դութիւ և Ասրգսիւ մեծ յուսով միաբանեցաք Հաղբատաց սաւրը Նշանիս և տուաք ձ. (100) գահեկան ի շինութեան ժամանանն: Տէր Համազասպ և այլ միաբանքս ընկալան և հաստատեցին մեզ պատարագ ի Յինանցն Յովհաննու տաւնին Բ. Շնորհաւորին, Բ. Առւսուզանայ, Բ. Թագուհւոյն Բ. Վարդուտին, Ա. Սարգսի և Ա. Դաւթի. կատարիչքն աւրշնին յԱստուծոյ. Ամէն:

Իներքոյ սորա ի թուին 2Ժ. (1261).

\* Կամաւն Աստուծոյ ես նուաստ ծառայ Քրիստոսի Սարկաւագ վաճառական որդի Վրդանիսի Դառնեցւոյ ապաւինեցայ ի սուրբ Նշանս Հաղբատաց, և կազմեցի խաչ մի արծաթի ոսկեզօծ և Բ. Նափորտ նասին և ատլաս վառ վասն փրկութեան հոգւոյ իմոյ և ետու ի սուրբ ուխտո: Եպիսկոպոս տէր Յովհաննէս հանգերձ վարդապետաքս և միաբանաւքս ընկալան և սահմանեցին ինձ յամենայն ամի մէկ պատարագ. յետ Ծ. աւուր տաւնին Բ. կիւրակէիս որշափ ես կենդանի եմ իմ ծնողացն առնեն Սարգսին, խափանիչքն դատին ի Տեառնէ:

### Իներքոյ սորա

\* Յազդմանէ սիրոյ զաւրութեան Հաւր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ յառաջնորդութեան տէր Յովհաննիսի մեք Արտավլ Պատակաց և վանականս և ամուսինն իմ Խորիշա՞ն և զաւակք՝ Քեշբենաց սարկաւագ Դաւիթս, Սարգիսս, Աբրահամս, և Պապն Աւագն մեծ յուսով կրկին միաբանեցաք մաւրս լուսոյ և առտուածընկալ սուրբ Նշանիս, և ըստ յուսոյ մերոյ ընծայեցաք նուէրս—երեք գիրք, յիսուն գահեկան. երեք եզն և մէկ կով:

Տէր Յովհաննէս և միաբանքն սիրով ընկալան և ետուն մեզ պատարագ զտաւն Նիկողոյանի հայրապետին զամենայն եկեղեցիքս և զգերեզմանատեղի սուրբ գաւթիս որչափ մեք կենդանին եմք մեր ծնողացն առնեն զպատարագն նմա՝ Ախովէրանուն և Խորտակի և յետ մեր ելից յիշի մեզ։

Իից սորտ ի կողմն հարուոյ։

«Ազգմամբ Աստուծոյ կոչեցեալ լուսեզէն ի միաբանութիւն եկեղեցւոյ Հաղբատոյ, և մեք տէր Յովհաննէս լրմամբ եղբարշո տուաք նմա Գ. պատարագ ի տաւնի Խփնատիսի հայրապետին երակու գրապետին, կատարիչքն աւրհնին յԱստուծոյ։

Ի ներքոյ սորտ։

«Յուսովն Աստուծոյ միաբանեցայ ես Գէորգ սուրբ Նշանիս. Մէր տէր Յովհաննէս և միաբանքս սահմանեցաք սուրբ Սարգսի բարեկենդանին զշաբամի աւուրին զպատարագն Գէորգայ տանեն և իւր հաւրին Սարգսի և մաւրին Յուլիսանդին. կատարիչքն աւրհնին յԱստուծոյ։

Ի վերայ հիւսիսային որմանց ի զանազան տեղիս։

«Ենորհաւք և ողորմութեամբն Աստուծոյ ես Յիթվասան ծառայ սուրբ Նշանիս եղբաւրորդի տէր Յովհաննէսի կացեալ ընդ հավանեաւ սուրբ Նշանիս զիմ հոգւոյ արդիւնս ի հալու վաստակոց ընծայեցի իսուրբ Նշանս և ի միաբանքս Շ. (50) եղն. ԳՈ. (3000) սպիտակ յառաջնորդութեան տէր Յովհաննէսի. եպիսկոպոս և միաբանքս սահմանեցին մեզ պատարագ զՅայտնութեան անաւրինոց աւրին զամենայն եկեղեցիքս մեզ պատարագել մինչ մեք կենդանի եմք, մեր հաւր Գարբանիէլին և մաւր նոցա Ասոյին յետ մեր ելից Բ. պատարագ իմ եղբաւրի Վաշէի, և Քաւթառաւոյ, Բ. Ազգէր Ազէլին և զայլն առնեն Ծիթվասանիս և ծնողաց։ Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ և խափանողքն զատին ի Տեառնէ։ Իթուիս ԶԵ. (1278)։

Ի հիւսիսակողմն ի վերայ որմոյ հին գաւթին, զոր քակեաց

Յովհաննէս եպիսկոպոս Խաչենեցի և շինեաց մեծագոյն։

«Ոիրովն Աստուծոյ միաբանեցան սուրբ ուխտիս Հաղբատու Մատթէոս քահանայ և ամուսին իւր Հեջիկն. և մեք տէր Յովհաննէս կամոկցութեամբ եղբարցս տուաք զԱսկեանց տաւնն զամէն եկեղեցիքս նոցա պատարագել. մինչ կենդանի են իւրեանց օնողացն առնեն. և յետ ելից նոցա՝ կէսն Մատթէոսին և կէսն Հեջկանն. կատարիչքն աւ բհնին յԱստուծոյ։

## Ի ՆԵՐՔՐՈՅ ԱՊՐԱ:

«Կամուն Աստուծոյ վատվագող եղեւ միաբանութեանն սուրբ ուխտիս Անդրբաս քահանայ և ամուսին իւր Թամմէ ետաւն արդիւնս ըստ խրեանց կարիս և մեք Տէր Յովհաննէս լրմամբ եղբարցու սիրով ընկատաք. և տուաք նոցա պատարագ ի տաւնի Անդրէի առաքելոյն զամեն եկեղեցիքս որչափ կենդանի են. խրեանց ծնողացն առնեն և յետ վախճանի խրեանց նոցա առնեն. կատարողքն աւրչնին յԱստուծոյ»:

Ի կողմն արեւմտից այսր հին և փոքր գաւթի:

«Ոիրովն Աստուծոյ միաբանեցան սուրբ ուխտիս Հասրաաայ աւագ երէց Տփիսիսեցի տէրտէրն և ամուսինն իւր Նազամելիքն հանդերձ որդւովք խրեանց և ետաւն ընծայ սուրբ Նշանիս՝ խաչ մի արծաթի և երկու նավորու և և. գահեկան և մեք տէր Յովհաննէս և միաբանքս սահմանեցաք նոցա պատարագ ի տաւնի որբաց հրեշտակապետացն Գալրիէլի և Միքայէլի զամենացն եկեղեցիքս անխափան և զաեզի առաջի զրիս՝ շիրիմ՝ ի խնդրոյ Բազնուապին Առութէնեսի. կատարիչքն աւրչնին յԱստուծոյ»:

Ի հիւսիսակողմն գաւթիս հանդէպ սուրբ Աստուածածնի եկեղեցւոյն:

«Մեծ յուսով՝ հս Աւագ Առագիս միաբանեցայ սուրբ Նշանիս Յառաթնորդութեան Տէր Յովհաննիսի և ըստ իմում կարի ընծացացի սուրբ Նշանիս Յ. (50) գահեկան տէր Յովհաննէս և միաբանքս ընկալան և ետուն մեզ պատարագ զեղիսկան կիրակէն՝ իմ հաւրն Խարսպին և իմ եղբաւրն Քարիմին. կատարիչքն աւրչնին յԱստուծոյ»:

Ի վերայ արեւմտեան զրան մեծի տաճարին արտաքաւս գրի այսովէս:

«Ի ժամանակս ինքնակալ արքային Գաւթի՝ քորեպաշտի և յաղթողի որդւոյ Գէօրգեայ որդւոյ Յազրաաայ . . . որ ամբիւաց գաւառիս և ազինս . . . եղեւ խնամուղ Հաղբաաայ և Ամնանի . . . ընթացեալ քաղցր և բարեսէր աստուածապաշտութեամբ . . . զշաղբաաա ի միմութենէ աւերութեանն ազաաեայ. զրով և զնուով ընծայեաց ի սուրբ եկեղեցիս զոյզիս . . . զգիւղն . . . և ամենացն հողով և վիճակովն . . . զեղեալ կոլուածս ամենայն զիրահաստատեաց . . . ով ձեռնամուխ լինի. կամ խափանէ. նղովի ի բերան էն Աստուծոյ. և մի տեսով զփառս նորա . . .

գրեցաւ գիրս յարքեպիսկոպոսութեան . . . առաջնորդի Հաղբատայ, որ է եղբայր Գրիգորի, ի թուին ՇՀ. » \*) (1121):

Ե լիր քան զոյս ի լիրայ միոյ քարի գրի այսպէս:

• Յամն աստուածազաւը և բարեպաշտ թագաւորին մերոյ Գէորգեայ\*\*) որդւոյ Գտւթի, ես աէր Բարոեղ առաջնորդ տան Հաղբատայ հանդերձ վարդապետաւրս . . . ի նմանէ և ի մեծամեծաց նորա ցուցաք . . . ընկալաք, և զիլիճակաց շրջաբերականան, Աստուած ի նոյա կամն զմեր խնդրելին կատարեաց: Ետուն զգիւղըն . . . զիւրեանց պապանցն զհրամանան և զհրովարտական հաստատեցին . . . ըստ որում ոմանք յանուպայ անձանց . . . նկուն առնելով զնոսա գարձոյց յեկեղեցիս . . . զիլիճակս գործաւք . . . Հաստատեսցէ զթագաւորութիւնն Գէորգեայ, երկնից զինաւորացն մասնակից արացցէ . . . (որք) ձեռնումոխ լինին զիճակիս որոշեալ լիցին ի փառաց Որդւոյն Աստուածոյ: Ե թուիս Ոիֆ» (1180):

### Յ Ե Ւ Ա Խ Ա Յ Ե.

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ.

Յահեակ ի հարաւակողմն այսր մեծի ժամատան է սագաշէն գեղեցկահոյեաց եկեղեցի յանուն որրոյն Գրիգորի լուսաւորչին: Համակ կերտեալ յազնիւ և յործատաշ քարանց: Կեղեցիկ է ներքին և արտաքին շինուածք հաստակառոյց այսր արկղաձեւ եկեղեցւոյ, և բաւական է ընդարձակութիւն և բարձրութիւն սորաւ: Ի սմին եկեղեցւով են ինն սեղանք պատարագի: յորոց առաջինն է

(\*) Դաւիթ Շինող քաջարի արքայն Վրաց որդի Գէորգոյ Բ. որդւոյ Բագրատայ Գ. թագաւորեաց ի 1089 ց1125 ամն: Ստեփաննոս Օրբելիան ի Պատմ. Սինեաց զլ. 66: զրէ զամն ամենայն կողմանց, զորս նուածեաց այս արքայ: յիշատակէ նաև վասն երկրին Լոռեյ, ի մերձակայս որոյ զըտանի վանքն Հաղբատայ համաձայն ժամանակագրացն Վրաց: բայց աստ մի թուանշան եղծեալ երեխ, և ո՛չ համապատասխանէ վերցզրեալ Փրկչական թուոյն:

(\*\*) Ըստ ժամանակագրոյն Վախուշտայ թագաւորեաց Գիորդի ի 1150 ց1174ն իսկ ըստ թուականին Հայոց ի 1158 ց1184ն թագաւորէր ո՛չ թէ որդին Դաւիթի այլ Դիմիտրոյ Ա. ըստ ժամանակագրաց մերոց Զամշան Հ. Իրես 79: զայս սիալանս ժամանակագրաց Վրաց ուղղէ Սէն-Մարտէն զանազանութեամբ տասն ամաց:

մեծարձակ բեմն յարեւելից գեղեցկաշէն խաչկալու, ունելով յաջ և յահեակ առաջի գաստցն զմի մի խորանս պատրագի (որք այժմ կոյին զգեստատունք), իսկ առ մոից արեւմտեան գրան եկեղեցւոյ են երեք խորանք յաջակողմն՝ և երեքն ի ձախակողմն ճորտարաշնար շինուածովք, կառուցեալք ի վերայ միմեանց, և ուղղեալք յարեւելո կոյս զրեմաքարս խորանացն, յորս մատուցանի պատարագ նուիրանաց Տեառն։ Կատարումն շինութեան այսր ամրաշէն եկեղեցւոյ եղեալ է ի նշն թուականին Հայոց (1005) որպէս զրի յարձանին որ յարեւմտեան լուսամտի. և ապա վերստին նորոգեցաւ ի ձեռն տէր Յովհաննիսի Խաչենեցւոյ և միաբան եղբարց Հաղբատայ. որպէս ցուցանէ արձանագրութիւնն՝ որ ի վեր քան զլուսամուտն։ «Եթուին ՈԿ (1211) նորոգեցաւ եկեղեցիս ձեռամբ տէր Յովհաննիսի և միաբան եղբարց՝ յիշեցէք ի Քրիստոս։»

Ի վերայ սուրբ Գրիգորի եկեղեցւոյս յաջակողմեան որմն կայ և այս արձանադիր։

«Ես տէր Համազասպ և միաբանք՝ յորժամ Աքրահամ վարդապետն և իւր քոյրն Աննա եկին մեծ յուսով ի սուրբ Նշանս և միաբանեցան. յառաջ երկու գիրք էին տուեալ, և այժմ ետուն սուրբ Գրիգորիս այլ և այլ արդիւնք. մեք ընկալաք սիրով և սահմանեցաք սուրբ Գրիգորի ելն ի վիրապէն մէկ պատարագ յԱննայի անուն մատուցանել. ով խափանէ դասի յԱստուծոյ։»

### ՅԵՒՊԻԱԾ Հ.

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱՆԱԾԻՒՆ։

Յաջակողմն մեծի ժամատան է յարձակալայլի անդ փոքրիկ եկեղեցի յանուն Աստուածամօրն պատկեալ գմբէթազարդ կտուզիկէիւ։ Եքեղ հանդիսանաց արեւմտեան կտմարտկապ զուռն սորա գեղեցիկ քանդակագործութեամբ և արտեսաւոր զասակարգութեամբ ստուար կոփածոյ քարանց։ Արտաքին երեսոյթ սորա գեղեցիկ է և բոլոր քարինք ձեղաւացն կիսով չափ հաստատոնելով զվերնածեկո, գործեալս իսով կոփածոյ քարանց իբրև զառուակս պահպանեալ են մինչեւ ցարդ զեկեղեցիս յանձրեային կաթլոց. բայց այժմ ժամանակն յեղափոխեալ է զձեւ գեղեցիկ շինուածոց նորա իթիւս աւերակաց։ Ի մտանելգ ընդ արեւմտեան

գուռն սորտ ի ներքս անդր երեւի ներքին շինուածն վայել չապէս հանգերձ փարբողիր պատարագամատոյց սեղանաւն։ Այս փոքր բայց գեղեցկաշէն եկեղեցի կառուցեալ է ի Խաթունայ տիկնոջէ Հասանայ յազգէ Դէսումեանց վասն յիշատակի մահուան երկուց եղբարց իւրոց որք եկեալք ի Խաչենոյ աստանօր փոխեցան ի Քրիստոս որոց գամբարանին գտանին ցարդ ևս անջինջ արձանագրութեամբը յաջակողմն մեծի ժամատան։

Սրտագուստ յարեւելս կոյս ի վերայ որմաց սուրբ Աստուածածին եկեղեցւոյ փորագրեալ կայ այս արձանագիր առանց թուականի։

\* Կամաւն Աստուածոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս արգեամբ Խաթունին որ էր գուստը Հասանայ յազգէ Դէսումեանց՝ որ բերաւ ի Խաչենոյ յամսւանութիւն Զաքարիայ, որ էր տէր Գագայ\* ) և Տաշոյ, Գարդմանայ և Տէրունականին և այլոց գտառաց. ընդ որում եկեալ եղբարք իւր Սենեքերիմ և Սեւագայ և փոխեալ ի Քրիստոս եղան առ զրան կաթուղիկէիս։ Եսկ Խաթուն վասն յիշատակի նոցա և իւր շինեաց զսու, և ետ ի սա զսուրբ նշանն ոսկի, որ ունի մասունո, և զաւետարանն մեծածոխ և ոկիչք արծութիք և այգի մի ի Խաթունաշինի։ Եւ ես տէր Յովհաննէս և միուրանքս Հաղբատոյ տուաք սոցա քաւաստնք մի պատարագ ի տարւոջն. ով խափանէ գտաէ զնա Աստուած, և զկատարիչքն աւրչնեցէ Քրիստոս Աստուած։ ամէն։

(\*) Բերդն Գագ և Տաւուշ գտանին ի հիւսիսոյ յարեւուսու Ելիսավէտոպոլս (Գանջայի) որոց տիրէին առ ժամանակ առանձնատոհմունքն Մխարդըրձելեանք, որդիքն Աշհերամայ իշխանի, և յատկապէս Զաքարիա կամ Քշու-Զաքարիայն այրն Խաթունի էր սերունդ ի նոյն իշխանական տոչմէն։